


# ՏԱՅ ՍԿԱՈՒՏ

## ԿԻՍԱՄԱՅԱՅ ՀԱՆԴԷՍ

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 5

1 ՅՈՒՆԻՈՒՐ 1920

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



### ՊԱՇՏՊԱՆ ԲԱԶՈՒԿՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵՆՔ

Ազգերու տեսականութեան եւ Միջազգային կեանքի մէջ ազդեցութեան տեսակէտով, տնտեսական եւ նարտարարութեան ուժը մեծ կարեւորութիւն ունի: Դերկայիս մէջ մանաւանդ, ուր պատերազմները զուտ տնտեսական հողի վրայ են, կ'արժէ լուրջ ուշադրութեան առնել զայն: Վերջերս, մեր մէջ ալ գրեթէ մեծամասնութիւնը, ինքզինքը տուած է միակողմանի կերպով առեւտրական պայքարի—մեր նիւթէն դուրս է անոր միջոցներուն շեղ կամ շիտակ ըլլալու պարագան—գրազէտներ, ուսուցիչներ, բժիշկներ, ինչո՞ւ է: Նոյնիսկ եկեղեցականներ, կը հետապնդեն այդ ասպարէզը: Մոլուցք մըն է այս: Հրապարակի վրայ հակերու եւ սնտուկներու բաւիղին մէջ կը տեսնէք զուր ամէն թիւի եւ սեռի մարդեր, պատանիէն սկսեալ մինչեւ ալեւորը, կ'առնեն ու կը դնեն, անապարանք մը, հեւք մը ամէնուն վրայ, կարծես աւարաւորութիւն կ'ընեն: Բարեմիտ ըլլանք այս գործունէութեան, տնտեսականապէս ապահովուելու մտահոգութեան նկատմամբ, եւ սակայն մէկ բան կը մոռնանք, մէկ բան՝ որ ամենակարեւորն է, այսինքն՝ ստացուած արդիւնքը ապահովելու միջոցն է այն: Հարստութիւն զիզներ լաւ, սակայն ո՞վ պիտի պաշտպանէ այդ զիզուածք, ո՞վ արգելք պիտի ըլլայ անոր յափշտակումին, երբ չունինք սեփնական հայրենիք, եւ նոյնիսկ ունենանք՝ ի՞նչ կ'արժէ երբ ան չունի զինք պաշտպանող կաշմբուն բազուկներ: Մենք տեսանք թէ ինչի՞ կը ծառայէ ոչ անկախ ազգի մը ձեռք բերած հարստութիւնը, եւնիպէր սեքրուիս ըլլալու միայն . . . մենք տեսանք անկախ ազգեր որոնք կը կուտակէին հարստութիւն եւ նոխարութիւն, սակայն զուրկ էին քաղաքացիական աւարիւնութենէ եւ հայրենանուէր երիտասարդութենէ եւ այսօր աւերակներու վրայ կ'իշխեն . . .

Եթէ չենք ուզեր քաղցակից ըլլալ այս ազգերուն, եթէ չենք ուզեր տնտեսապէս եւ քաղաքականապէս զերուիլ ուրիշներէ, զիտակից քաղաքացիութեան ոգի ներարկներ մեր պատանիներուն, զրահապատ ֆիզիկականով օժտներ զանոնք: Անոնց բազուկներով ցանկապատ հիւսներ հայրենիքին շուրջ, ուր հայ անհատը կարենայ ազատօրէն վայելել իր քրտինքին արդիւնքը, եւ իր անկղարանք բնակարանին մէջ խաղաղօրէն կարենայ բնանայ:

Արդ, այսօր հազարաւոր որբերու բազուկներն ու սրունքները մեզի կ'սպասեն, այդ հիւժած եւ այլանդակուած անդամները պէտք ունին մարգուելու եւ ուժովնալու որ կարենան իրենց պարտականութիւնը կատարել, իսկ մենք ալ այդ պարագային պէտք ունինք հայ ժողովուրդին նիւթական աջակցութեանը: Եթէ մեր ծայրը անլսելի մնալու դատապարտուի, հետեւանք կ'ըլլայ Ազգային փրկիչական եւ քարոշական փախիս:

Նախ պատրաստեմք պաշտպան բազուկները, ապա փստանիք սնեստական եւ ֆաղափական անկախութեան:



# Ս Կ Ա Ո Ւ Տ Ի Կ Ե Ա Ն Ք

## ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ Գ Ի Տ Ա Կ Ի Ց Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ն

### Հ Ա Յ Ս Կ Ա Ո Ւ Տ Ի Ն Ե Ր ՈՒ Ն

Մարմնակրթութիւնը մեր մէջ նախապատմական ժամանակներէ ի վեր ջերմ համակրութիւն գտած է: Հայ պատմութեան մէջ սքանչացումով է որ կը տեսնենք մեր նախահայր՝ յաղթական Հայկը, կ'զմայլինք հուր հեր, բոցէ մօրուս և արեգակէ աչկունք ունեցող վահագնին և յարգանքով կը խոնարհինք քաջարագուն Տրդատի և անվրիպելին Թաթուլի առջև:

Իսկ մեր արիւնտ ու նոյնքան փառապանծ Ազատամարտին անվհատ հայդուկները ոչ միայն մարմնակրթութեան, այլ նաև բարոյական դաստիարակութեան տիպարներու ոսկեղէն շղթայ մը կը կազմեն անտարակոյս:

Ուժի և ասպետականութեան այն ոգին որ ոգեւորած է մեր նախահայրերը, ժառանգականօրէն կը փոխանցուի սերունդէ սերունդ և դուք կը տեսնէք Հայը՝ միշտ կաշմբուսն ու մարտնչող, սրտով արի, բարձր ու խիզախ, բարքով՝ արհամարհող գձուձ ու դեմնաքարչ արարքները, մնայով միշտ սարսափը բռնակալ ու քմահաճ կարգուսարքի: Ահա Հայու ոգին իր պատմութեան մէջէն:

Նոյն իսկ համաշխարհային պատերազմը Հայը գտաւ իր պատնէշին վրայ, այնչափ տուկուն և այնչափ ազնիւ որչափ չէին նոյն իսկ կարգ մը ազգեր, որոնք անկախ զարգանալու հնարաւորութիւնը ունենալով հանդերձ, բիրտ ուժը ունեցան իրր նպատակ ու միջոց և անգոսնեցին արդարութիւնն ու իրաւունքը:

Արդ, Հայ սկառուտներ, դուք որ կոչուած էք ըլլալու ազատ քաղաքացին Անկախ Հայաստանի, ներեցէք որ ձեզ ուղղեմ խօսքս:

Գտնուելու համար միշտ ազատ և ասպետական ազգերու առաջին գիծին վրայ, և նոյն իսկ — ինչո՞ւ չըսենք — գլխի, անցնելու համար զանոնք, պէտք է նկատի առնենք, թէ լոկ մարմնակրթութիւնը, առանց մտային կրթութեան և ի մասնաւորի առանց հոգեկան կամ բարոյական դաստիարակութեան, կ'առաջ-

նորդէ մարդը եսասիրութեան և ամբարտաւանութեան: Լոկ մարմնակրթութեան հետեւողը կ'ըլլայ անձնասէր, այլատեսաց և արհամարհող, վայրագ ու բիրտ: Ահա Թուրքիան լաւագոյն օրինակ, որ երբէք չկրցաւ գնահատել այս կէտը:

Հայ սկառուտը պէտք է ուժեղանայ ծառայելու համար իր ընկերոջ, հասնելու համար տկարին և մարդկութեան, որուն մէջ է նաև մեր թշնամին:

Հայ սկառուտը պէտք է գիտնայ թէ ազնուութիւնը, ներողամտութիւնը և վեհանձնութիւնը պէտք է ըլլայ աշխարհի օրէնքը՝ փոխադարձաբար ապահովելու համար մարդկային երջանկութիւնը:

Գարաւոր՝ բայց ասպետական վրէժ հաղէպ չարին և մեր թշնամիներուն հաւնայնական քեւակեանքով, հաւաքական հասկացողութեամբ, կարելի օրինական միջոցներով չարունակ նկատուենալով թէ Արդարութիւնը և Իրաւունքն է միշտ յաղթանակողը և պէտք է ըլլայ տիեզերական տիրապետողը: Ահա դարուս զարգացման քաղաքակրթական զսպանակը որուն հիմունքը ջանաց զնել Ուիլսոն: Թող հայ սկառուտները ճակատ ու պատնէշ կազմեն Անկախ Հայաստանի ասպետական զրօշին տակ, թող կարգապահօրէն հետեւին զիրենք վարող ակնուրիշներն ու արդարութիւնը ներկայացնող խորհրդարանին օրէնքներուն և անոր գործադիրը եզոզ հրամանատարներուն: Բայց երբնք, ինկած և ինքնապաշտպանութենէ զուրկ թշնամիի զէմ ուղղուած ու է գձուձ արարք թող չմտնէ հայ սկառուտին մաքուր և ազնիւ ձեռքը: Արի պաշտպան արդարութեան լաւ է կալանաւորել և նուիրել ազէտ թշնամին արդարութեան բազինին, քան թէ մութի մէջ սպաննելով արիւնտեղ այդ բազինին սպիտակ պատուան դանը:

Գիտակից կարգապահութիւնն ու գիտակից հպստակութիւնն և որ կը բարձրացնէ հաւաքականութիւնը, խուժանը կը վերածէ «quis quis» համայնի և ժողովուրդը «sine» կը դարձնէ իր ազատութեան: Օրինակ՝ մեծ ազգերը, Ամերիկան, Անգլիան, Ֆրանսան և յն:

Անտարակոյս քաջալերական է հայ անհատին ինքնապաշտպանութեան ոգին և իրաւունքի համար կռուելու փափաքը, զոր արթնցնելու



ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒՆ

համար շատ արիւն և թանաք վառնուեցաւ, սակայն անհրաժեշտ է որ ռազմաւեր ոգի և փառաբանական հաստունութիւն միտասին ընթանան: Հայ կառուող մը, երբ սուրը կը քայլէ. պէտք է գիտնայ թէ կրնայ ամբողջ ազգին պատասխանատւութիւնը վստահել: Պէտք չէ մոռնալ թէ անհատական յախուռն ձեռնարկներ համազգային աղէտներու պատճառ եղած են և կրնան ըլլալ, միշտ պատճառ ունենալով քաղաքական տնտեսութիւնը: Ընդհակառակը հայ կառուողը, միշտ իբրև Ազգին մէկ անդամը, պէտք է իր սուրը դնէ հայ դիւանագիտութեան արամադրութեան տակ:

Ամէն պարագայի մէջ ալ փառաբանութիւն և ազնուութիւն մեր պարտականութիւնը պիտի ըլլան, քանի անհատներու հետ է գործերնիս: Պէտք չէ մոռնալ թէ քարին և որ կը յաղթանակի և որ պէտք է ըլլայ հասնաշխարհային սկզբունքը հաւաքելու համար անոր շուրջ ամբողջ մարդկութիւնը, նոյն իսկ, ըլլայ ակամայ, անարգ և քարշ թշնամին:

Ու այսպէսով դու՛ք, հայ պատանիներ, կուրծքերնիդ հպարտ, ձեր ետեւէն կը լսէք. «Ահա՛ վեհանձն հոյ արի մը որ ջրամոյն թուրք կին մը ազատեց, վտանգելով իր կեանքը» — «Ահա հայ բժիշկ մը որ այսինչ ջարդարարին հիւանդ ընտանիքը ստոյգ մահուրնէ մը ազատեց» — կեցցեն վեհանձն և քաղաքակիրթ հայ Արիները:

Ու երբ կառուի փողը կը հնչէ, մարդկային իրաւանց յափշտակիչներու արդար պատիժը անօրինելու համար է այդ, ազգն է որ ձեզ կը հրաւիրէ: Հանդարտօրէն և արագ, ազատութեան առաքեալի մը խանդաղատանքով քաշեցէք ձեր սուրերը, քանի որ Արդարութեան յաղթանակին համար է այդ: Յառաջ դէպի Արգարութիւն: Վա՛յ անօրէն կոյրերուն որ չեն տեսներ այդ Արեգակը:

Ահա մեր նշանաբանները: Եւ արդէն. ինչպէս կը կրկնէի, սկառաւական տասնաբանեան համառօտագրութիւնն է այս ամենուն: Կը մնայ զանոնք մարսել և գիտակցօրէն իւրացնելով՝ սույ մարմնոյն կորով, սրտին՝ թռիչք և ուղեղին ներդաշնակ վարիչի իր դերը:

Գառ-Գիւղ                      ՏՈՒՐԹ. Գ. Ա. ՍՈՒՐԵՍԱՆ

Տասնուվեց տարեկան էի դեռ, և հակառակ այդչափ փոքր տարիքիս, յեղափոխութեան մէջ տեղ տուած էին ինծի, մանաւանդ վաստակով մեր ԾԷ հոգինոց մեծ խումբին վարչութեան մէջ պատասխանատու պաշտօն մը:

Այդ օրերուն խումբի մը, որչափ ալ փոքր ըլլար, նոյնիսկ 12 հոգինոց, վարչութեան մէջ գտնուիլը եթէ իսկապէս հպարտութիւն ու յանձնապատասխանութիւն էր, քանի որ ամէն վայրկեան իր պէտքերովը յղի ըլլալով կրնար վտանգել խումբիդ մէկ կամ մէկէ աւելի ընկերներու կեանքերը, և սակայն ունէր իր մէջը առնացի կեցուածքի բովանդակ թելադրանքը, յեղափոխականի մը առաջին ճամարիտ գիտակցութիւնը:

Ես նպատակ դրած եմ իմ յուշերէն տալ «Հայ Ակառու»ին միայն այն բաժինը՝ որ կը վերաբերի մանուկ մտքին, պատանի յղացումին, և, թէև տղայ, յեղափոխօրէն պատրաստումին, հաւատալով որ հայ Արին որոշ չափով պիտի օգտուի իր եղբորմէն ու պիտի ուզէ նմանիլ անոր:

Այս անգամ ես կը պատկեմ մեր ամէնուս սիրելի և շփացած Եղիշէի մասին: Վարչութեան անդամներէն մէկուն կենսազիւ մենափոքր եղբայրն էր Եղիշէն, հազիւ 10-11 տարու, բայց իր սոխակի ձայնով, իմաստուն շարութիւնով և փորձուած գաղտնապահութեամբ բոլորիս ալ հոգիհատորն էր:

Ինքնավստահ էր Եղիշէն ու իր փոքրութիւնը և ի պահանջիլ հարկին ապուշի կեցուածքը պատճառներ էին որ թուրք փոխան ու խաֆիէն կարեւորութիւն չընծայեն իրեն, և այդպէսով Եղիշէն ամէն տեղ էր ու ամէն տեսակ օգտակար թէ վնասակար և կամ չէզոք լուրեր կը բերէր մեզի, զոր կը կրկնէր ու կը կրկնէր ձանձրացնելու աստիճան, «գլխներուս մէջ ազէկ մը լեցնելու համար», իր բառովը:

Չինքը լեռցնելու միակ հնարը որ կար, ժողովը բանայն էր պաշտօնապէս, որ ատեն, թողած իր բոլոր տղայութիւններն ու շփացումները, պատկառելի լրջութեամբ մը սենեակին մէկ կողմը կը քաշուէր ու կը նստէր և այնչափ լարուած կը հետեւէր մեր վիճաբանութիւններուն և որոշումներուն որ անկարելի էր գիտնալ թէ վայրկեան մ'առաջի ձանձրացուցիչ շաղակրատն էր:



Ըսինք որ Եղիշէն ազատ էր մեր ժողովներուն գտնուելու, անկէ գաղտնի ոչ մէկ բան ունէինք, ու տարիներ տեւող ժողովներու մէջ չեղաւ նոյն իսկ անգամ մը որ բառ մ'արտասանէր, միջամտէր մեր վիճաբանութիւններուն:

1903ի ձմեռն է. Մշոյ Չորոյ թաղի տուններէն մէկուն սենեակին մէջ ժողով ունինք. ծանր, մահացու տխրութիւն մը համակած է զմեզ. լուսթիւնը տիրապետակոն է:

Թաղին հանդիպակաց բլուրներուն վրայ քանի մ'օրէ ի վեր թուրք զօրքերը վրաններ դարկած 2-3 մէթր ձիան վրայ ճամբան կը պահեն, Համիտեան կասկածներէ տարուելով:

Տակաւին վրանները չը զարնուած. Չխուրէն մեզի լուր տրուեցաւ որ 12 հատ գէնք կայ ծախու, և բերող թիւրքը կ'աճապարէ:

Ստիպուած էինք աղքատը մերկացնել, այդ գէնքերը գնելու համար. 240 ոսկի էր պէտք:

Թէ ինչպէս գոյացուցինք այդ գրամը, ուրիշ առթիւ պիտի պատմեմ, որը ունի իր շատ հետաքրքրական և ծիծաղելի կողմերը:

Դրամը և 12 հոգի ալ խումբէն դրկեցինք Չխուր՝ գէնքերը փոխադրելու համար. անոնց երթալու յաջորդ օրը զօրքերը Մշոյ և Դաշտի գիշերային միակ ճանապարհն եղող բլուրը բռնեցին, ու գացող աղաքը այս բանէն լուր չունէին:

Օր մը վերջ պիտի վերադառնան բայց պիտի հանդիպին զօրքերուն և դէպքն ու մահը անխուսափելի է. որովհետեւ մօտ 4-500 զօրք կայ վրաններուն մէջ, իսկ դէպքէն վերջ Մուշը թէ ինչ վիճակի պիտի հասնի երեւակայելն իսկ կը խենդեցնէր մեզ:

Ոչ մէկ բան կար արգիլող հանդիպումը. մենք չէինք գիտեր թէ ընկերները ուր են այդ օրը, որպէս զի լուր դրկէինք իրենց, որպէս զի չը գան և կամ գէնքերը գատշը ձգին հայու մը առնը: Պիտի գան. եթէ ձիան վրայ շինուած տրորուած ու կոխուած միակ ճամբայէն գան՝ զօրքերուն կը հանդիպին, և քանի որ տարբեր ճամբայ չկայ, պիտի ստիպուին ձիւնը պատռել ու գալ, այդ հետքին ալ յաջորդ առտու պիտի յաջորդէ անխուսափելիօրէն խուզարկութիւն հայ տուններու մէջ... դէպք:

Ահա այդ օրը. կիրակի, գիշերը աղաքը պիտի գան, ու մենք կորսնցուցած ինքզինքնիս: Քլուխնիս կը պայթեցնենք թէ և, ճար մը, ելք մը գտնելու համար, բայց ոչինչ:

Յանկարծ Եղիշէն ներս կը մտնէ: Տեսնելով մեր դրութիւնը, ինչ որ աննախընթաց էր,

սկսեց իր շաղակրատութեան, սակայն և ոչ մէկէ: պատասխան ստացաւ, յետոյ սկսեց խնդրանքը, ազաչանքներ տեղացնել ընկերներուն, հասկնալու համար մեր կացութեան պատճառը. վերջապէս ձեռքէն ազատելու համար ընկերներէն մին պատմեց իրեն աղոց մեկ կնու մը Չխուր. —

— Չէ՞ որ 12 հոգի գաշար գնացին:  
— Է՛, ա՛յո, ի՞նչ կայ որ, դէ՞պքի են բռնուեր:

— Ո՛չ, բայց պիտի գան այս իրիկուն:  
— Կողի՞ ճամբով — (բլուրի ճամբով բսել կու գէր):

— Այո՛, բայց ճամբան ալ գոցուեցաւ, և ընկերը մատուր ցոյց տուաւ վրանները:

Եղիշէն մեզմէ աւելի շանթահարուեցաւ ու գնաց կրկնգիլ մէկ անկիւնը. դադարած էր իր ձայնը:

Անցաւ քանի մը վայրկեան, գէշ երազէ մը արթնցողի նման վեր ցատկեց տեղէն ու դուրս վազեց սենեակէն: Դէմքը լուսաւորուած էր:

Պէտք է յիշել որ Եղիշէն 70-80ի մօտ 7-12 տարեկաններու խումբ մ'ուէր «Հետեւակ» անունով և իր խմբապետութեամբ, ու ամէն բուպէ կը խնդրէր ու կը թախտնձէր որպէս զի վտերացնենք իր խումբը և անցնենք պաշտօնականներու շարքը, բան մը որ մերժած էինք միշտ ալ:

Անցաւ կէս ժամ մէկ ալ տեսնես «Հետեւակ»ը իւրաքանչիւրը մէյմէկ շան վիզերէն կապած պարաններէն բռնած, Եղիշէի առաջ նորդութեամբ ցրուած են Կողի (բլուրի) լանջին և, անչուշտ. Նախուպէս տրուած հրամանի մը համաձայն էր որ ոչ թէ իրարու հետեւէ, այլ ցրուած զանազան տեղեր կ'իյնան ու կ'եղնեն. զիկ-զակ կ'ել թան, ձիան երեսը կը կոխկրան, և պօռալ կանչելով կը բարձրանան:

Եղիշէն դիտմամբ կ'երթայ վրաններու քով, հերթապահ չափուշր կը բարկանայ ու կը հարցրնէ թէ ինչու են այդ շուները. — Եղիշէն կը պատասխանէ թէ «կ'երթանք աղուէս բռնելու»:

Խումբը, այդպէս, անարգել, ձեան երեսը արորելէն և ամեն կողմը հետք չիւնելէն կը յառաջանան մինչեւ Մուկունք գիւղը. ուրկէ վերադարձան երբ արդէն մտի էր, յոգնած, պարտասած, քրտնաթոր:

Գալողներու ճամբան բաց էր այլեւս, այնպէս որ ոչ թէ 12 այլ քանի մը տասնեակներ կրնային հայ թաղերը գալ բոլորովին աննշմար: Եղիշէի հնարամտութեան շնորհիւ փրկուած



կր՝ 12 երիտասարդ ընկերներ. Մուշր ազատ-  
ուլուած էր անխտ սափեկի խուզարկութենէ և դէպ-  
քօէ մը և մենք մեր արդէն 54 ղէնքերուն վը-  
րայ աւելցուցինք 12 հասուս:

Տասն ու մէկ տարեկան էր Եղիշէն այդ  
տարին:

ՍԻՍՍԱՆ ԵՍԼԻՍԱՆԳԵՍԱՆ

ՍԿԱՌԻՏԸ ԱՆՍՍՈՒՆՆԵՒՈՒՆ ՀԱՆԴԷՊ

Ա.

Նկատելով որ, սկիտուաին նուիրական պար-  
տականութիւններէն մին է ասնասոււններու հան-  
դէպ գութն ու խնամքը, մանաւ մնդ՝ մեր այն  
ընտանի կենդանիներուն համար, որոնք կարե-  
ւոր և օգտակար ծառայութիւններ կ'ընեն մար-  
դուն, և որ, սկիտուաին այդ պարտականու-  
թիւնը լաւ կերպով կատարելու համար անհրա-  
ժեշտ է նանջնալ կենդանին և խնամել զիսնալ  
դոյն: Կարողութեանս ներսը չափով պիտի խօ-  
սիմ կարգով 7 մասերու բաժնուած հետեւեալ  
նիւթերուն վրայ:

Ա. — Ըստանի կենդանիներուն բաղդատա-  
կան մարմնակազմութեան վրայ անհրաժեշտ և  
համառօտ տեղեկութիւններ: Բ. — Բնախօսու-  
թիւն (մարմինն մէջ գտնուող գործարաններուն  
պարտականութեան մասին ամփոփ ծանօթու-  
թիւններ): Գ. — Պարզ և ամենակարեւոր հի-  
ւանդութիւնները իրենց նախնական դարման-  
ներով: Դ. — Մանրէական և փոխմնջիկ հի-  
ւանդութիւնները: Ե. — Դեղաբանական ան-  
հրաժեշտ և համառօտ տեղեկութիւններ: Զ. —  
Առողջապահութիւն: Է. — Մարմինն կազմա-  
կան ձեւերէն և արտաքին երեւոյթներէն ճանչ-  
նալ անոնց առաւելութիւնները և թերութիւն  
ները, տարիքը՝ ձօտս որապէս, և աշխատելու  
ընդունակութիւնը և յարմարութիւնը՝ ծառա-  
յութեան զանազան ճիւղերուն մէջ:

Ուղղակի նիւթին անցնելէ առաջ, իբր նե-  
րածութիւն, կ'ուզեմ խօսիլ այդ չգնահատուող  
անխաւ էակներուն անունով թէ ինչ է անոնց  
ծառայութիւնը մարդկութեան, իրաւացի պա-  
շտանքը մեզմէ և մեր պարտաւորութիւնը ան-  
ոնց հանդէպ

Մարմնական ծառայութիւններով կենդանի-  
ներուն մարդկութեան մատուցած ծառայու-

թիւնը, քիչ քաղաքակրթուած, փոխադրական  
միջոցներէ զուրկ և կամ ներկայի գիտական  
մեքենական նորութիւններով չ'օժտուած երկիր-  
ներու մէջ — ինչպէս մերը — շատ աւելի է քան  
Նորոպական դարգացած և քաղաքակրթուած  
կեդրոններու մէջ: Օրինակի համար ձին, իբր  
հեծնելու կենդանի, մեր երկրին մէջ ամէն տե-  
սակ ճամբաներու համար հանգստաւէտ փոխադ-  
րութեան միջոց մըն է, նոյնպէս իբր կառա-  
ձիգ (chevaux de trait) և կամ իբր գրաստ,  
գաւառները, կարգ մը քաղաքներու մէջ պըղ-  
տիկ աղօթիքներու քորերը կը դարձնէ. քանի  
մը քիլօմէթր տարածութեամբ բանջարանոց  
պարտէզները օրը 2 անգամ ջրելու համար ան-  
ընդհատ կը դառնայ ու կը դառնայ վիթխարի  
ջրհորին շուրջ, որուն ջուրը չցամքի՛ր սակայն,  
չեն ձգեր որ վայրկեան մը հանգչի, անմիջապէս  
մտրակը կը շաչէ իր քիչ անունդով շատ աշ-  
խատելուն հետեւանքով չորցած գաւակին վը-  
րայ, չարժուն խանութն է ան շրջուն մանրա-  
վաճառներուն և Փոքր Ասիոյ բոլոր ջրեպան-  
ներուն՝ որոնք ճիշդ բառով և ժողովրդական  
բացատրութեամբ անոր կոնաւ'էն կ'ուտեն իրենց  
հացը, հասութարեք կալուած մըն է ան ձիար-  
չաւի մրցումի սխալարներուն համար՝ որոնք  
հարիւրաւոր սկիներ կը շահին անոր երեսէն.  
Որ անհատը, մեր երկրին մէջ, տեղական հա-  
ցը՝ իր ապրելու նախնական անհրաժեշտ սնուն-  
դը, առանց կենդանին աշխատութեան պիտի  
կրնար ուտել. պէտք է տեսնել Միջագետքի  
տաք և անապատային անսահման դաշտերուն  
մէջ հարիւրաւոր ջորիներու, էջերու և ուղտե-  
րու կարաւաններուն կատարած խոշոր ծառա-  
յութիւնները իբր փոխադրութեան միակ միջոց  
տեղացի ժողովուրդին ձեռքը: Ինչպէ՛ս չան-  
դրադատնալ պատերազմի մէջ անոնց կատարած  
դերին վրայ: Ո՞՞՞՞՞՞ արարածներ, զօրաշարժի  
առաջին օրը զանոնք ալ կ'սկսին զինուորա-  
գրել. հեծելազօրքէն զատ, թնդանօթներուն,  
գնդացիներուն և բոլոր վաշտերուն ռազմա-  
նիւթը. սնունդն ու անհրաժեշտ կազմամները  
փոխադրողը ան է, մէկ խօսքով բանակին փո-  
խադրութեան միջոցներուն 100 ին 90 ը մեր  
երկրին մէջ: Առանց անոր՝ բանակը ոչ պիտի  
կրնար յառաջանալ և ոչ նահանջել և առանց  
սնունդի կամ ռազմանիւթի պիտի յաղթուէր  
անպայման, կամ նշանաւոր զօրավարին ըսա-  
ծին պէս «կոնսակէն պիտի պարտուէր»: Եւ սա-  
կայն, չնայելով որ շատ անգամ խեղճը թշնամի  
ուսմբին կամ գնդակին կը զոհուի — անմեղ



# ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԳՈՒՍ ԳԱԲՈՒԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ

զոհը՝ մարդկային փառասիրութեան կամ աշխարհակալական ցանկութիւններուն — և մարդուն քով, որ հայրենիքի, ազգասիրութեան կամ գաղափարի զոհ կը կոչուի. իրաւունք կը ստանայ ճակատագրի զոհ կոչուելու, քանի որ ինքնակամ չէ որ կ'երթայ, այլ ազատութիւնը կապտուած և աշխատելու բռնադատուած վիճակի մէջ կը քշեն կը տանին զինքը հոն և ուր անգիտակցաբար կը զոհուի. այո՛. չնայելով այս ակամայ և ճակատագրական զոհաբերումին, ինչպէ՞ս կը խնամեն զայն կամ կը վարձատրեն իր անգին ծառայութիւնները. աշխատութեան չտիրին համապատասխան ժամանակով բնական և անհրաժեշտ հանգիստի իրաւունքը ժխտելով, կարողութեան չափէն աւելի ծանրութիւն բեռնընել կամ քաշել տալով, հարկեցնող պատճառներու պատրուակին տակ սնունդի քանակը փոխանակ աւելցնելու քիչցնելով և անգթութիւնը կատարեալ ընել, այդ սնունդի կտորն ալ բերնէն քաշելով, գողնալով և ծախելով... ինչ որ շատերը տեսան կամ լսեցին վերջին ընդհ. պարարագի միջոցին գէթ մեր երկրին մէջ. Եւ այս ամէն անխղճութիւնը ի գործ դնելով հանդերձ, ստիպել որ աշխատի, աշխատի մինչև որ իր ոյժի վերջին մասնիկն ալ սպառելով ինչայ մեռնի ծառայութեան և պարտականութեան ճամբուն վրայ. Եւ այս բոլոր անխղճութիւններուն հանդէպ ընդզգելու, բողոքելու, ապրատամբելու անկարող խեղճ կենդանին լուր կը մնայ ակամայ անոր համար որ անբան է կամ անխօս: Ահա թէ ինչո՞ւ այս պարագային ալ իրաւունք կ'ունենայ «սպերախտ մարդկութեան անգթութեանց անբան զոհը» կոչուելու: Տուէք անոր խօսելու և արտայայտուելու կարողութիւն մը և պիտի տեսնէք թէ ի՞նչ թոյներ պիտի ժայթքեցնէ մարդկութեան ճակտին, ապուշ մարդկութիւնը պիտի նմանցնէ իր նստած ճիւղը կտրողին, ոճրագործ պիտի կոչէ զայն և հարցնէ թէ ո՞ր իրաւունքով զինքը մասնակից կ'ընեն իրենց փառասիրական և աշխարհակալական պատերազմներուն՝ անգթորէն զոհնուլ համար զինքը: Եւ վստահ եմ թէ՛ անխելք և անզուժ մարդկութիւնը ամօթահար՝ պիտի լռէ այս ամենուն հանդէպ:

ԱճԱՆԲԺ, ԵՐ. Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Շար.)

Կիրակի, 14 Դեկտ. Եէնի-Գափուի եկեղեցիին մէջ մեծ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ Հ. Մ. Ը. Մ. ի ԼՂԲԴ (Գում-Գափու) Մասնաճիւղին նորընծայ Սկաուտներու Երդման արարողութիւնը:

Սկաուտները տեղւոյն վարչութեան և խումբապետին կողմէ եկեղեցի առաջնորդուեցան ուր ներկայ գտնուեցան պատարագի արարողութիւններուն: Յաւարտ պատարագի Ս. Պատրիարք<sup>Յ</sup>օր նախագահութեամբ և խումբապետ



Գումգաբուի նորընծայ երդուեալ սկաուտներու խմբանկարը որ Դեկտ. 14ին Ենիգաբուի եկեղեցիին մէջ Ս. Պատրիարքի ներկայութեան կատարեցին իրենց երդումը: Կեդրոնը նստողներ և երկու կողմը կեցածներ, Պ. Պ. Գր. Յակոբեան (կեդր. խմբապետ), Կ. Պոյաճեան (խմբապետ), Գ. Գրիգորեան (խմբապետ), Յ. Դանունի, Պ. Շապոյեան, Գ. Գալիաքճեան:

մութեան ներկայութեան սկսաւ Երդման արարողութիւնը:

Նախ Սկաուտներու խմբապետը մօտեցաւ սեղանին և ձեռքը հոն դետեղուած աւետարանին և խաչին վրայ դնելով պատրաստի դիրքին մէջ արտասանեց Սկաուտի Երդումը, ուսկից վերջ կեդրոնի խմբապետը անոր ձախ ուսէն կախեց խմբապետի նշանակը՝ 4 ճերմակ ժապաւէն, և զլուխը դրաւ սկաուտի գլխարկը. կարգաւ փոխ-խմբապետը, առաջնորդներն ու սկաուտները նոյն ձեւով կատարեցին իրենց երդումը և ստացան ուսի նշանակը (4 կանանչ ժապաւէն) և գլխարկ:



Իրապէս չատ յուզիչ եղաւ այս արարողութիւնը: Երկանները հայ առողջ պատանիներու անվեհեր համարձակութիւնը և անոնց նուիրական պարտականութիւններու համար կատարած երգումը անսնելով՝ չկրցան անտարբեր մնալ և գրեթէ ամէնքն ալ չափազանց յուզուած կ'երևուէին, նոյնիսկ ամանց աչքերը արցունքով սպողաւած էր: Ակառւաններն ալ արարողութեան նուիրականութիւնը բմբռնած էին և ուրախ զուարթ, կորովի ու համարձակ քայլերով մօտեցած էին անտարանին, կատարելու իրենց առաջին ու վեհ պարտականութիւնը:

Ս. Պատրիարք հայրը օրհնեց նորընծայ սկառւանները, հայրական հակիրճ, բայց ազդու իրատականով բացատրեց Երզման արարողութեան նուիրականութիւնը, խրախուսեց զանոնք սրպէտզի ըլլան ճշմարիտ ազգաւէրներ, ֆիզիքականով և նկարագրով զարգացած անհատներ որոնց անհամբեր կ'սպասեն ազգն ու հայրենիքը:

Այս արարողութենէն վերջ, Ս. Պատրիարք հայրը, նորընծայ սկառւաններով շրջապատուած, առաջնորդուեցաւ «Նոր Այգ» Ֆանֆառի սրահը, ուր խումբը Ս. Պատրիարք հօր և սկառւաններու ի պատիւ նուագեց հայկական քայլերգը: Այդ սկառւանները խմբովին հետեւեցան Մասնաճիւղի դրօշին, և վերադարձան մարզարան: Հոս եւս խումբն բաղձութեան ներկայութեան, կեդրոնի խմբապետ Պրն Գր. Յսկրզեան երկու խօսքով բացատրեց նորընծայ սկառւաններու պարտականութեան գիտակցութիւնը ունենալ և թելադրեց սրպէտզի անոնք կանոն սորաբար հետեւին իրենց մեծերուն հրահանգներուն և լաւ մարզուին, յառաջիկայ Մայիսի Միասուական Միջազգային մրցումներուն մէջ առաջնութիւն խելու համար: Նա անկցուց թէ՛ հազուադէպ սկառւան չը լինեն, այլ երգումէն վերջ պէտք է պարտականութեան գիտակցութիւնը ունենալ, հոգւով և մարմնով նուիրուիլ գործին և բարոյապէս ու ֆիզիքապէս զարգանալ, տանելու համար մեր ուսերուն վրայ ծանրացող բեռը:

Ներկաները շնորհաւորելով Վարչութիւնն ու նորընծայ սկառւանները, խիստ գոհ տպաւորութեան տակ մեկնեցան:

Սոյն հանդէսին, թէ մարզարանը և թէ եկեղեցիին մէջ ներկայ գտնուեցան Բերայի ֆրնս, սկառւանելու պետը՝ Պրն. Կօտը Ծրուա իր երեք սկառւան հետեւորդներով: Անոնք թէյով հիւրասիրուեցան մարզարանին մէջ և հայ սկառւաններու հետ լուսանկարուելէ վերջ շնորհաւորեցին հայ սկառւանները:

\* \* \*

Հ. Մ. Ը. Մ. ի Գում-Գարուի Մասնաճիւղի Վարչութիւնը կը փութայ հրատարակել իր շնորհակալութիւնը յայտնել Ս. Պատրիարք հօր, կեդրոնի խմբապետին և լուսանկարիչին, Եկնի Գափուի Թաղ. Աորհուրդին և պոլսահայ մատուին, որոնք իէենց օժանդակութիւնը բերին սոյն նուիրական հանդէսին:

×

ՍԱՍԱԹԻՈՅ ՍԿԱՌՆՆԵՐՈՒ

14 Դեկտ. կիրակի, Սաւաթիոյ Ս. Դէորդ եկեղեցւոյ մէջ խումբն բաղձութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ թաղիս Հայ Սկառւաններու երգման արարողութիւնը, այս առթիւ հանդիսաւոր պատարագ մատոյց Տ. Ղեւոնդ արքեպիսկոպոս Գուրեան, որ գեղեցիկ քարոզով մը ի վեր հանեց հնազանդութեան ոգին և անոր օգտակարութիւնը:

Ներկայ էին Հ. Մ. Ը. Միութեան կեդ-



Մ. ՆԻՈՒ ՄԸՆ

Ամերիկացի, Ընգհ. պետ Այառնի նահանգին հայ սկառւաններու, որ անձնուիրաբար ինքզինք տուած է իզմիրի Հայ Սկառւանները կազմակերպելու և ամէնուն համակրանքը շահած է: Դեկտ. 14ին մեկնած է Ամերիկա և խոստացած է ին ներկայացնել Հայը և Հայ սկառւանական կազմակերպութիւնը, Բոստանու մը շատ սրտաուուշ եղած է, այս առթիւ իզմիրի Հայ Սկառւաններու կողմէ Պ. Մ. Եմանըգեան սկառւանական մեռալ մը կախած է համակրելի Ամերիկացիին կուրծքէն:

րոնի կողմէ Պրն. Հայկ Ճիւղճեան, տեղւոյն Յոյն Սկառւաններու խմբապետը, և բաղձութիւ սկառւաններու ծնողքներ: Սկառւաններու երգման արարողութիւնը մեծ տպաւորութիւն գործեց



որքան ներկաներուն, նոյնքան և աւելի եր-  
 դուողներուն վրայ, որոնք խիստ յազուած էին.  
 Իւրաքանչիւր սկաուտ իր տասնապետին կողմէ  
 առաջնորդուելով եկեղեցւոյ սեղանի առջեւ  
 հոն հայկական եռագոյնին և աւետարանին վը-  
 րայ, հանդիսաւոր կերպով կատարեց իր եր-  
 դուժը, որմէ յետոյ խմբապետէն ստացաւ զինքը  
 Ակաուտ նուիրագործող նշանակը և երիզը: Եր-  
 դուողները յետոյ իրենց մարզարանը առաջնոր-  
 դուելով, իրենց խրատական և քաջպերական

խօսքեր եզան սկաուտի մը մայր՝ Տիկին Զ.  
 Զարպանէլեանի և Պրն. Հ. Ճիզմէճեանի կող-  
 մէ: Թագիս բոլոր միութեանց ներկայացուցիչ  
 ները խորհրդարանի մէջ իրենց համակրութիւնը  
 և շնորհաւորութիւնները յայտնեցին Միութեան:  
 Այս առթիւ Հ. Մ. Ը. Միութեան Սամաթիոյ  
 մասնաճիւղի նուիրեցին Տիկին Զ. Զարպանէլ-  
 եան 500, Պրն. Գրիգոր Մանֆազաեան 200  
 դահեկան:



ԲԵՆԻԱՄԻՆ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ

Աշխոյժ երիտասարդ, Վանի Ճութ-  
 պօլի խումբի կարեւոր ան-  
 դամներէն, ներկայիս Երեւան  
 կը գտնուի:

ԵԶՆԻԿ ՔԱԶՈՒՆԻ

Եռանդուն մարզիկ Տորք Ակուժ-  
 րի անդամներէն: Ներկայիս կը  
 գտնուի Երեւան, ուր ընդհ. որբա-  
 նոցներու մարզանքի ուսուցիչն է:

## Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

ԵՐԵՒԱՆ 15 ՆՈՅ 1919

Հայ Մարմնակրթական Ընդհ. Միութեան  
 Կեդրոնական Վարչութեան

Յարգելի ընկերներ

Բոլորովին անակնկալ կերպով Պոլսէն ըն-  
 կերներէս մէկը իմ հասցէիս զրկած էր «Հայ  
 Ակաուտ»ի I թիւը:

Անսահման հրեմուանքով կարդացի ի հարկէ,  
 վերջիջելով բոլոր անցեալի քաղցր օրերը, այն

խանդավառութիւնը որ ստեղծուած էր նախ  
 քան պատերազմը ֆիզիքական շարժման շուրջ,  
 այն առոյգ տրամտղրութիւնները մեր նոր սե-  
 րունդի շարքերուն մէջ, այն խանդավառ  
 երազները ապագայ Հայաստանի մը գաղափա-  
 րին ի նպաստ, գօտեանդուած ու յուսալից  
 թռիչքները որոնց շնորհիւ է միայն որ թէեւ  
 կոտորակուած, կ'ապրինք մենք, կ'ապրի Հա-  
 յաստանը, հայ ժողովուրդը: Ներկան՝ ուր  
 իրական է ազատութիւնը որ հիմնաւոր-  
 ուած է ալ հիմայ: Իսկ եռուզեւը որ  
 ծայր է տուեր հիմայ ձեր ջանքերով անհա-  
 մեմատ աւելի ուժեղ է եւ աւելի բարձր քան



յիսկինը եւ տարակոյս չի կայ որ լաւագոյն ,  
որակ եւ ամենաուղիղ միջոցն է մեր մէջ ար-  
մատացած գոեհկութիւնները եւ տափակու-  
թիւնները բառնալու եւ հարթելու ազատու-  
թեան , արշաւի ուղին : Չեր մարգած սերունդն  
է որ պիտի կազմէ ռահվիրան եւ զրօշակիրը  
հայ ժողովրդի զնացքին մէջ՝ միջակութիւն-  
ները զէպի լուսաւոր բարձունքներ , զէպի  
լուսաշող քաղաքակրթութիւնը :

Արտով ձեզ հետ ենք մենք , եւ ամէն բան  
պիտի ընենք որ անպայման հայկական եռա-  
գոյնը բարձրացնենք Հայաստանի մեծ Ալեգար-  
դին , Արարատի բարձրագոյն ոլորտները :

Երեւանի մէջ ինչպէս նաեւ Հայաստանի  
բոլոր միւս կեդրոնները պիտի աշխատինք ծա-  
ւալելու այդ նոր գաղափարը գործով եւ որը  
փտահ ենք իրապէս պիտի ունենայ մեր հոգի-  
ներուն վրայ՝ մոգական գաւազանի ազդեցու-  
թիւն :

Կրթական նախարարութիւնը անսահման  
խոստումներ ունի , եւ կարելի է ըսել որ ար-  
դէն գործի սկսած ենք :

Անպայման կը թղթակցիմ ձեր թերթին ,  
ջանալով ձեզ հաղորդել օրը օրին ամէն շարժ-  
ման մանրամասնութիւն եւ նոյն իսկ լուսա-  
նկարներ :

Թերթին համար շուտով կը զրկեմ բաժ-  
նեզին , եւ կ'աշխատիմ մեծ թիւի հասցնել  
զայն :

Սիրով  
ԵՋՆԻԿ ԳԱՋՈՒՆԻ

Առա՛ւա, 26 Նոյեմբեր 919

Առ  
Հ. Մ. Ը. Միութեան Կեդր. Վարչութիւն  
Կ. Պոլիս

Գոհունակութեամբ ստացայ ձեր զրկած  
Հայ Սկաուտներու Յայտագիր-ձրագիրը , ներ-  
քին Կանոնագիրը . . Պիտի խնդրէի որ յաճախ  
Ձեր հրահանգները զրկէիք մեզ . կ'ուզենք որ  
օգտուինք Ձեր Միութեանէն , բանի որ հայ  
կեանքի մէջ աճնաւաճոցին կազմակերպու-  
թիւնն է : Ի հարկէ ունիք գործին բաջ հմուտ  
մարդիկ : Իսկ մենք հոս շատ բանէ զրկուած  
ենք . մեր մէջ կայ եռանդ գործելու . ունինք  
անզլ . եւ փրանսական սկաուտներու զրքերը ,

փոքր ինչ ալ տեղեկութիւն մը , բայց այդ չի  
բաւեր . ուստի վերոյիշեալ խնդիրքս կը յու-  
սամ թէ նկատի կ'առնէք : Պատիւ ունիմ  
Ձեզ յայտարարելու որ կարողացայ Ատանայէն  
զատ Տարսոնի (Թարսուս) մէջ ալ մասնաճիւղ  
մը հիմնել եւ կը յուսամ թէ այս օրերս Մէր-  
սին ալ կարողանամ հաստատել , ուրկէ պէտք  
է անցնիմ միւս շրջանները , ինչպէս Սիւս , Հա-  
նըն , Մարաշ , Զէյթուն , Տէօրթ Եօլ , իւրա-  
քանչիւր շրջանի արիներու մարզիչներ նշանա-  
կած եմ :

Ընդունեցէք յարգանացս անկեղծ հաւաս-  
տիրքը :

Կիլիկեան Հայ Արիներու Մարզիչ  
ՍԻՔՅԱԷԼ Խ. ԻՇԼԷՍԷՃԵԱՆ

919, XI/19 Մերսին  
(ԿԻԼԻԿԻԱ)

Պատուարժան Խմբագրութիւն  
«Հայ Սկաուտ» ի  
Կ. Պոլիս

Անհուն ուրախութեամբ ստացայ Հ. Մ.  
Ը. Միութեանդ «Հայ Սկաուտ» պաշտօնա-  
թերթը :

Ուրախալի՛ մանաւանդ խիստ գովելի է  
ընդհանուր հայութեան մէջ Սկաուտական այս  
շարժումը տեսնել :

Քաղած տեղեկութեանցս նայելով սկաուտ-  
ներու ներկայ թիւն է , Պոլիս՝ 200, Իզմիր՝  
300, Գահիրէ եւ Ազեքսանդրիա 200, իսկ Բօր-  
Սայիտի գաղթավայրին մէջ կար 250, որոնք  
Հ. Բ. Ը. Միութեան տուած Սկաուտի տարա-  
գին տակ հայրենիք մեկնած են ի ձեռին ունե-  
նալով Սկաուտի աստիճանը ցոյց տուող տը-  
պագրեալ վկայագիրներ : Այժմ Հ. Բ. Ը. Մի-  
ութեան Մերսինի եւ Տէօրթ Եօլի որբանոցնե-  
րուն սկաուտներու թիւը 300 է :

Վեղջերս Կիլիկիոյ մէջ եւս շարժում մը  
սկսած է : Այս նուիրական գործը լայն ասպա-  
րէզի մը վրայ դնելու համար Ատանայի մէջ  
կազմուած է Սկաուտական սպայակոյտ մը ,  
որոնց պետը՝ Տիար Մ. Իշլէմէնեան , բանի մը  
օր առաջ Ատանայէն Մէրսին եկած էր , միօ-  
րինակ խումբեր կազմակերպելու միտումով եւ  
այդ մասին երկար տեսակցութիւններ ունե-  
ցանք : Շատ ուրախալի էր որ ձրագիրներու





Հ. Բ. Ընդհ. Միութեան Բօր-Սահաի Հայ Սկաուտներու մուտքը Կիլիկիա (Մերսին), առաջնորդութեամբ Պ. Համազասպ Փանոսեանի:

գործադրութեան մէջ հակասական ո՛ր եւ է բան չունէինք եւ գազափարնիս միեւնոյնն էր:

Երիտասարդներու կազմակերպական այս եռանդը ցոյց կուտայ թէ այս անգամ Միացեալ Անկախ Հայաստանի հիմերը ամուր հողի վրայ պիտի դրուին:

Ազգային իշխանութեանց հետ ամէն հայ անհրաժեշտ է որ միանգամ ընդ միշտ գործին վեհութիւնը ըմբռնէ, ուժ տալով ապագայ հայութեան ամուր հիմերու վրայ դնելու այս ձեռնարկը:

Վերջին տարիներու տառապանքն ու սարսափը հայը բոլորովին փոխեց, գրեթէ չմնաց հայուն մէջ մեր նախնիքներէն ժառանգ մնացած բարեմասնութիւնները: Արդ՝ բանի ուշ չէ, մատերնիս ճիշդ վէրքին վրայ դնենք եւ դարմանումի սկսինք, նշանաբան ունենալով մեզ «Ծառը պզտիկուց շտկելու» խօսքը:

Ուրեմն խումբերուս եւ իմ կողմանէ հրրճուանքով կ'օղջունեմ բոլոր փոքր եղբայրներս որոնք մինչ այժմ սկաուտի դրօշին տակ համախմբուած վաղուան փառքը հիւսելու ճիգին մէջ կը գտնուին:

Հ. Բ. Ը. Միութեան Վարժարանաց Սկաուտներու պետ՝  
**ՀԱՄԱԶԱՍՊ ՓԱՆՈՍԵԱՆ**

ՏՅՐՈՒՆ, 24 Նոյեմբեր, 1919

Պատուածան

Կեդրոնական Վարչութիւն Հայ. Մարմ.

Ընդհ. Միութեան

Կ. ՊՈԼԻՍ

Շատոնց ի վեր կը փափաքէինք հազորակցիլ Պատ Վարչութեանդ հետ.

Կը յուսանք թէ շատով պատասխանելու բարեհամոթիւնը պիտի ունենար.

Քաղաքիս մէջ վերակազմուեցաւ Հայ-Արիներու (Scout) Միութիւն մը, կեդրոն աւնենալով Ատանայի Հայ-Արիներու Միութիւնը.

Սոյն ազգաշէն կազմակերպութիւնը հոս Կիլիկիոյ մէջ իր բուն նպատակին ծառայելու համար քոյր միութեան օժանդակութեան կը կարօտի քանի որ ձեր միութիւնը շատոնց կազմակերպուած ըլլալով աւելի փորձառու եւ աւելի գործերուն տեղեակ է, ուստի պիտի խնդրենք որ ձեր սկաուտական պէտքերուն հայթայթման աղբիւրը եւ ստանալու միջոցներն ու զինքերը գրէիք մեզ նոյնպէս ձեւերն ու գործածութեան եղանակները.

Կրկին պիտի խնդրէինք որ «Հայ Սկաուտ» թերթը եւ սկաուտական ո՛ր եւ է պրօշիւր կամ հրատարակութիւն Միութեանս հասցէին գրկելու շնորհն ընէիք. Նոյնպէս ազգային թատերգութիւններ գտնելով գրկէիք մեզ, որով կարող պիտի ըլլանք հաւարել մեր դրամագլուխը, մենք պատրաստ ենք վճարիլ ծախսերը, վստահ ենք որ ձեր ամենալաւը պիտի ընէիք մեր նորահաստատ Միութեան օգտակար ըլլալու համար.

Կանխաւ ընդունեցէք մեր շնորհակալիքը,  
Յարգանքօք

Ի Դիմաց Տարսնի Հայ-Արիներու Վարչութեան  
Ասենադպիր Ասենապետ  
Յ. Ա. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ      Հ. Յ. ՅԱԿՈԲԵԱՆ



# ՍԿԱՌԻՏԱԿԱՆ

ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՅԻ ՄԷՋ



ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ (ԿՐԹԱԿԱՆ) ԵՍԹԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՐԹՆԷ՛ Հ Մ Ը Մ Ի ՎՐԱՅ

Երեւանէն նոր վերադարձած՝ մեր կեդր վարչութեան նախագահ անդամ Պ. Գ. ՄԷՐՃԻՆՕՅԻ հետեւեալ յայտարարութիւնը ուշադրութեանը կը յանձնենք մեր համակիրներուն եւ մեր ընթերցողներուն, որ պարտականութեան ծանօտեան սակայն նուիրական բնու մը կը դնեն մեր ուսերուն վրայ:

Հ. Մ Ը Մ

Հայաստանի Լուսավորութեան (կրթական) նախարարութիւնը իրեն մտահոգութեան օտարական ըրած է նաև մարմնակրթական եւ սկստական շարժումը: Ներկայիս Հայաստանի մէջ կան 20,000 երկսեռ որբեր, որոնց վեց հազարը (4 հազար աղջիկ, 2 հազար մանչ) Երեւանի մէջ են. սոսնք առ այժմ կը հետեւին մարզանքի դասերուն որուն հաւար իրր ուսուցիչ ունինք Պ. Եղնիկ Քաջունին եւ ուրիշ Չե՛ ուսուցիչ մը որ կառավարութիւնը յատուկ բերել տուած է մարզանքի համար: Քաջունին ստիպուած է տասնապետներ նշանակել ամէն մէկ խումբերու եւ ինք հակել անոնց վրայ եւ սակայն դժուար թէ հասնի այս ամէնուն: Միւս Չե՛ ուսուցիչը որ ազնիւ մէկն է եւ որ Ռուսերէն լեզուով կ'աւանդէ դասերը նոյնպէս չը կրնար հասնիլ պէտք եղածին չափ: Ասով հանդերձ նորէն գործ մը կայ մէջտեղ որ պէտք ունի ՄԱՐԴՈՒ եւ անձնուէր մարզու:

Սկսուածներ կան հոն եւս սակայն ձեր այս տեղիներուն պէս ամէն դիւրին միջոցներ չունին անոնք, քուպիկ ոսֆով մարզանք եւ պոյսներ կ'ընեն, նոյն իսկ աղջիկները:

Նախարարութիւնը ընդարձակ մարզարան-

ներ յատկացուցած է ասոնց, եւ Ամերիկայէն սաղօն մարզարաններու եւ գործիքներու գաթաթօկներ բերել տուած է եւ որ անմիջապէս ապրսպրանք պիտի տայ: Արդէն հոն կան բաւական մը երկաթ թիւղեր շարժուն մարզարաններ կանգնելու համար, որոնք Ռուսերէն մնացած են:

Ամերիկեան որբախնամն ալ իր որբանոցներուն մէջ բաւական ուժ կուտայ մարզական գործին:

Սակայն նախարարութիւնը կ'ուզէ հաստատուն եւ կանոնաւոր հիմերու վրայ դնել շարժումը, որուն համար մէկ մրիտն բուպիի պիտի մէջ մը կը պահանջէ խորհրդարանէն եւ յոյս կայ որ խորհրդարանը պիտի վաւերացնէ սոյն գումարը: Ես թիֆլիսի մէջ անձամբ տեսակցութիւն ունեցայ Լուսավորութեան նախարար Պ. Նիկոյ Ազապալեանի հետ որ Պոլսոյ Հ. Մ. Ը. Մ. Ի աջակցութիւնը կ'ուզէ Հայաստանի մէջ եւս տարածելու նոյն շարժումը: Երեւան վերադարձին, պաշտօնապէս պիտի գրէ հոս ձեր կեդրոնին որ շուտապէս մարզանքի մասնադէտ ուսուցիչ մը դրկէք հոն՝ տեղին մէջ գտնուող մի քանի ուժերու հետ կազմակերպելու համար այս կենսական գործը:

Անշուշտ է յանձնառուն պէտք է որ անձնուէր մէկը ըլլայ, նիւթական շատ բան չսպասելու համար այս գործին, թէ ե իրեն բաւելու չափ թոշակ մը որոշուած է նախարարութեան կողմէ եւ սակայն Պոլսոյ դիւրութիւնները կարելի չէ գտնել հոն: Հայաստանի մէջ ամէն աշխատանք միայն անձնուիրութեան ոգիով մը կարելի է տանիլ առ այժմ. վարչապետէն սկսեալ մինչեւ յիտին զինուորը, նորակազմ հայրենիքին համար եղած անձնագոհութեան տուած սրտի գոհունակութիւնը միայն ունին իրենց իր վարձք:

«Հայ Սկսուած» թերթը կարելի է զրկել հոն իրր նուէր որովհետեւ ձեր 7.50 զրշ. գինը 15-20 բուպի կ'արժէ որով շատ դիւրութեամբ չեն կրնար վճարել:

Վերջացնելով խօսքս կ'ըսեմ որ պիտի ե պարտաւոր կենանք նախարարական կոյիլն եւ կարելի նոյնիսկ սիջ մըն ալ անկարելին գործ դրնելու համար պիտի եղած ուժը հաւաստենք դրկելու հոն՝ ուր գործ կայ եւ գործիչի պիտի կայ:




# ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԲԱԺԻՆ

## ՖՈՒԹՊՕԼ

Գ.

ԽՈՂԸ ԱՆՍԵՂՈՒՑ ԵՐԷՆՔՆԵՐԸ



Ճսթագօրի խումբերը պէտք է ֆիֆթըն մը ընտրեն իրենց մէջէն, որուն պաշտօնը պիտի ըլլայ ֆուտբոլի քիւլը պատրաստել և վարժութիւններ ընել տալ: Խաղացող խումբերու ֆիֆթընները նախապէս պէտք է իրարու յարաբերուին և համաձայնած ըլլան թէ ո՞ր և ժամը քանիին պիտի սկսի մրցումը: Այս որոշուելէ վերջ կը մնայ ֆիֆթըններուն իրենց խաղացող 11 անհրաժեշտ աղաքը առնել միասին խաղի դաշտը երթալ՝ իր ամբողջ կազմուածքովը, գնդակով, կօշիկներով և յաւելուածական ֆանելաներով, որոնք շատ կարեւոր են, որովհետեւ խաղացող աղաք խաղէն վերջ շատ հոգ տանելու են իրենց մարմնոյն: Խաղէն անմիջապէս վերջ պէտք է քրտինքէ թրջած հաղուսանները հանեն և չորերը հագնին:

Ամէն խումբ և խումբի ֆիֆթընները պէտք է շատ բծախնդիր ըլլան յարգելու իրենց ժամադրութիւնը և միշտ աշխատին ճիշդ վայրկեանին դաշտին վրայ գտնուիլ ամբողջ քիւլովը: Շատ անգամներ պատահած է որ մեր հայ խումբերը որոշուած ժամանակէն քանի մը ժամ իսկ առաջ հասած ըլլան խաղավայրը: Բայց երբ ղեկավար խաղը սկսելու երկրորդ և երրորդ կողմ կ'ընէ, դաշտին վրայ հազիւ թէ մէկ քանի խաղացող իրենց տեղը բռնած կ'ըլլան: Մինչդեռ անգլիական խումբ մը եթէ խաղը սկսելէ քանի մը վայրկեան առաջ ալ հասած ըլլայ դաշտին վրայ, խաղացողները անմիջապէս կը հանուին և կազմ ու պատրաստ խաղը սկսելու հրամանին կ'ապասեն: Տեսէք տարբերութիւնը խումբերու ճիւղիկներն և ժամադրութիւնը յարգելու պարտականութեան: Ես ուղղակի պօ. ֆիֆթընները պատասխանատու կը բռնեմ եթէ իրենց քիւլը ժամանակին դաշտին վրայ չեն հաներ: Եթէ երկու խումբերու ֆիֆթընները նախապէս ղեկավար մը չեն որոշած, այն ատեն դաշտին վրայ գտնուող հանդիսականներէն կամ իրենց խումբերէն յարմարաբար անձ մը որ ֆուտբոլի ուսէնքնելը գիտէ, երկու կողմի համաձայնու-

թեալը դատաւոր կ'ընտրեն, որուն պաշտօնն է ամբողջ խաղին ժամանակամիջոցին խաղին ժամը բռնել և խաղին օրէնքները գործադրել տալ:

Բեկերին կ'ընտրէ երկու հոգի, որոնք ուղղակի իր հրամանին տակ են, անոնց պաշտօն կուտայ խաղին երկու կողմի «ք» գիծերուն վերայ հսկել որ դուրսէն մտող խաղի դաշտը չի մտէ, տեղի կարեւորը երբ քրջ ըլլայ իրենց ձեռքի պզտիկ դրոշակով ցուցնել քրջ եղած տեղը, և որու կողմէ ըլլալը և կամ քրջ էն վերջ գնդակը նետելու իրաւունքը որ խումբին ըլլալը: Ասոնց պաշտօնը ուղղակի ղեկերին օգնել է, որովհետեւ ամէն ղեկերի չի կրնար ամէն վայրկեան ճիշդ գնդակին մտքը գտնուիլ, ուստի հետուն եղած պարագային ալ լաւ չի կրնար նշմարել թէ գնդակը ո՞ր խումբին կողմէ քրջ եղած է, թէեւ կարեւոր է որ ղեկերին ինք անձամբ ամէն վայրկեան գնդակին հետեւի և տեսնէ ամբողջ անցողորձը խաղին մէջ: Ֆիֆթընները պարտաւոր են ղեկերին ըսել թէ քանի վայրկեան պիտի խաղան, թէեւ խաղամասը 90 վայրկեան է, բայց 60 վայրկեան ալ կը խաղան: Եթէ 90 վայրկեան որոշած են խաղալ, այն ատեն ղեկերին պարտաւոր է 45 վայրկեան վերջ խաղը կեցնել և 5 վայրկեան դադար մը տալ, իսկ եթէ 60 վայրկեան որոշուած է, այն ատեն 30 վայրկեանէն պէտք է դադար տայ, անշուշտ պէտք է նկատի առնել գնդակին խաղի դաշտէն դուրս հեռանալուն արկած մը պատահելուն, գնդակին պայթելուն և կամ սեղ պատահաւոր յառաջ եկած ժամանակի կարեւոր կորուստները և հանել խաղի ժամանակէն, որովհետեւ խաղացուած ժամանակն է որ նկատի պիտի առնուի և ոչ թէ այլ և այլ կերպով վատնուած ժամանակը:

Երկրորդ կէտին խումբերը իրենց կողերը պարտաւոր են փոխելու, այն կողմի կօյր որ կը պոշտպանէին առաջի կէտին, անոր դէմ պէտք է խաղան երկրորդ կէտին: Խաղը սկսելէ առաջ ֆիֆթընները պէտք է համաձայնին իրարու հետ թէ կօյրուն ո՞րը կ'ուզեն ունենալ առաջին կէտին: Եթէ չի համաձայնին, այն ատեն ղեկերին մետաղէ դրամ մը կամ ասփակ քար մը կ'առնէ և կը հարցնէ թէ ո՞ր կող էր կ'ուզեն, ու վեր, օգին մէջ կը նետէ և կը ձգէ որ գետին իջնայ կը նային, և որուն որ ուզած կողմը վեր եկած



է, այն ատեն իրաւունքը կը տրուի այդ խումբին ընտրել իր ուզած կողմի կողմը: Իսկ գնդակին առաջին հարուածը գարնելու իրաւունքը կը մնայ հակառակ խումբին:

Գնդակին առաջին հարուածը տուող խումբի զօրուարդները ճիշդ գնդակին մասիկը, մէկ ուղղութեամբ կը շարուին, իսկ հակառակ կողմի զօրուարդները իրաւունք չունին շրջանակին գիծէն կամ եթէ շրջանակ մը չէ շինուած, 10 եարտայէն մօտ չի յառաջանայ. ուրիշ կարեւոր կէտ մըն ալ՝ ռեփրիւ սուլելէ վերջ ալ չեն կրնար յառաջ քայել, մինչեւ որ գնդակին առաջին հարուածը չի տրուի, որովհետեւ գնդակին հարուածը տրուելէն է որ խաղը կ'սկսի և ոչ թէ սուլիչովը: Ամէն մարդ իր տեղը բռնելէ վերջ ռեփրիւ պարտաւոր է խաղացողներուն թիւը համրել և եթէ 11 էն աւելի է խաղացող երկու խումբերէն մէկուն թիւը, հրաման ընելու է այդ խումբին ֆեյրըն ին որպէսզի աւելող համարուածը խաղի դաշտէն դուրս հանէ: Պէտք է կօշիկներնին ալ քննէ և եթէ խոշոր գամեր կամ երկաթներ կայ, արտօնելու չէ, որովհետեւ կրնայ առանց ուզելու հակառակ կողմի մէկուն կից մը դարնելով վիրաւորել: Այս ամբողջ գործողութիւններէ վերջ ռեփրիւ գնդակը կ'առնէ և դաշտին մէջտեղի «Ը» կէտին վրայ կը զնէ պատրաստ հրամանը տալէ վերջ, սկսելու սուլիչը կը փչէ, և առաջին հարուածը որ կը արբուի գնդակին, ճիշտ այդ վայրկեանին ռեփրիւ պէտք է ժամացոյցը նայի թէ քանիին սկսաւ խաղը, և լաւ կ'ըլլայ որ թուղթի մը վրայ գրէ որովհետեւ կրնայ մոսցոսի կամ դժուարութեան հանդիպիլ երբ գնդակը որ և է կերպով խաղի դաշտէն դուրս ժամաւաճառ ըլլայ կամ արկած մը պատահի և այդ ժամերը բռնելու պարագային ժամանակի սխալ մը գործէ, ուստի ռեփրիւներուն իրենց համար իսկ լաւ է գրելը: Միշտ աշխատելու են որ երբէք դիտողութիւններու առիթ չի տան և իրենց պաշտօնը լաւ կատարեն: Շատ դժուար և փափուկ պաշտան մ'է այս, և խաղալէն շատ աւելի յոգնեցուցիչ:

Րեփրիւներուն պաշտօնին և իրենց պարտականութիւններուն մասին ուրիշ առթիւ երկարօրէն պիտի խօսիմ: Որով կ'անցնիմ խաղին հետ ուղղակի կապ ունեցող մանրամասնութիւններու: Պաղը սկսելէ վերջ եթէ անձրեւի սկսի ու դժուարացնէ խաղալը կամ որ և է ուրիշ պատճառ մը ըլլայ, այն ատեն երկու կողմի ֆեյրընները կրնան համաձայնիլ և ռեփրիւն ըսելով խաղը վերջացնել տալ, պայմանով որ

ժամանակը նկատի առնուի թէ որքան խաղացին և լինելու դեռ որքան ժամանակ կար, որովհետեւ մնացածը ուրիշ օրուան մըն ալ կրնանայ յետաձգուիլ, անշուշտ նկատի առնելով երկուստեք եղած կօշիկն ալ: Երբ մնացեալ ժամը խաղալու սկսին, պարտաւոր են ճիշդ խաղալու ժամանակին կէտին իրենց կօշիկը փոխել խոշորի չէ թէ որքան քիչ ըլլայ այդ ժամը ճիշդ ինչպէս որ նոր խաղի մը կէտին պիտի ընէին: Րեփրիւները պարտաւոր են այս օրէնքները յարգել տալու: Պաղացող պարտնները միշտ արթուն պէտք է իրենց գործը նային և աւելորդ խօսքերէ ու պօռայներէ զգուշանան, ըլլայ ռեփրիւն կամ իրենց ընկերներուն հասցէին, որովհետեւ այս խաղին մէջ ամէնէն կ'օրեւորը պարտամբ խաղը շարունակելին է և ոչ թէ յուզուած պօռայ կանչել ու ժամաւաճառ ըլլալը:

Օրինակ. քանի մը կիրակի առաջ առիթը ունեցայ թախմանէ երթալ, բարեկամներուս Պր. Հայկ ձիգ մէծեանին և Պր. Վահրամ Փափազեանին հետ, ուր երկու անդիական խումբներ կը մրցէին իրարու դէմ, մէկը ցամաքային իսկ միւսը ծովային: Պաղի միջոցին այնպէս պատահեցաւ որ ծովայիններու կօշիկը անտեղի կերպով իր տեղէն դուրս ելաւ, և ճիշդ այդ պատճառաւ հակառակորդները կօշ մը չաւնեցան, իր կողմի խաղացողները որ օգի ի բռնի կ'աշխատէին, ահաբի ճիգ կը թափէին յաղթելու համար տեսան այդ կօշին ըլլալը, որ կօշիկին յանցանքն էր, բայց և այնպէս առանց ձայն հանելու գնդակը առին ու չիտակ սկերք տարին: Ընդդ այդ վայրկեանին Պր. Հայկ ձիգ մէծեան ինծի դարձաւ ու ըստ թէ՛ «Տես, երբէք ձայն հանեցին կօշիկը այդ անխոհեմ շարժումն համար»: Պր. ձիգ մէծեանին այդ զգույ և ինձ բնիլը որոշ պատճառ մը ունէր, որովհետեւ Պարոնը գրեթէ միշտ հայ խումբերու մրցումներուն ներկայ գտնուած է և տեսած է թէ այս տեսակ պարագայի մը հայ խաղացողներն ի՞նչպէս կը զայրանան և կը պօռան իրենց ընկերովը վրայ, ու երբէք նկատի չեն առնել ներկայ գտնուող հանդիսականներուն ներկայութեան իրենց ընկերովը անարգութիւնը: Ուստի խոշորող կուտամ մեր խաղացող պարտններուն որ միշտ համեստ ըլլան և արթուն, իրենց ընկիւղ գործին ուշադիր ըլլան ու միշտ աշխատին լաւը ընել լոկ մեջիկ:

Պ.Ս.Ս.Ս.



# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

## ԱԹԼԵԹԻԿ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Անգլիոյ Գէմպրիճ համալսարանի փրէյմէն կարգի աթլէթիկ մրցումները տեղի ունեցան նոյեմբեր 11ին: Շահուած չափանիշերն հետեւեալներն են. 100 եարտա վազք 10<sup>1</sup>/<sub>5</sub> երկվ. ոյժ առած բարձրութիւն ցատկել՝ 5 ոտք 5<sup>3</sup>/<sub>4</sub> ինչէզ. 400 մէթր վազք՝ 52<sup>4</sup>/<sub>5</sub> երկվ. կէս մղոն վազք՝ 2 վայր. 2<sup>3</sup>/<sub>5</sub> երկվ. մէկ մղոն վազք 4 վայրկ. 52<sup>3</sup>/<sub>5</sub> երկվ. ոյժ առած երկայնութիւն ցատկել՝ 21 ոտք, 3 ինչէզ. 3 մղոն վազք՝ 16 վայր. 16<sup>4</sup>/<sub>5</sub> երկվ.

\*. Անգլիա, Ռուսաստան և Հարաւային Ափրիկէ պաշտօնապէս իմաց տուած են Միջազգային Ոլիմպիական Մաղերու Յանձնախումբին թէ՛ իրենք որոշած են 1920 Յուլիսի վերջերը Անվէրսի մէջ տեղի ունենալիք մրցումներուն մասնակցիլ: Այս առթիւ կ'առաջարկուի որ պօսի և որկպիի մրցումներ ևս աւելցուին խաղացանկին վրայ:

\*. Ֆրէնկ ֆօս, Շիգակոյի Աթլէթիկ գիւպէն, ձողով բարձր ցատկելու աշխարհի չափանիշը կոտրած է, 4,06 մէթր ցատկելով: Հին չափանիշն էր՝ 4,016, շահուած 1912 Սթօք-հօլմի ոլիմպիականներու միջոցին նոյնպէս ամերիկացի Ռայթի կողմէ:

\*. Հոկտ 5ին Բարիզի շրջանը (42 քիլոմէթր) ընելու վազքի մրցում մը տեղի ունեցած է: Նշանաւոր կոփամարտիկ՝ Պ. Գարբանթիէ ճամբայ կլելու նշանը տուած է: Ա. հանդիսացողը ֆրանսացի մըն է՝ Հանրի Սիրէ, 2 ժամ 56 վայրկ. Բ. ը Պէլճիգացի մըն է՝ Բիգար, 3 ժամ 14 վայրկ:

## ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Լոնտօնի մէջ, ձիւնոտ ու փոթորկալից օդով, նոյեմբեր 15ին 5,000 հանդիսատեսներու ներկայութեամբ Անգլիոյ և Իրլանտիոյ լաւագոյն խումբերուն միջև խիստ կարեւոր մրցում մը տեղի ունեցաւ: Օ ի դէմ 5 կօլով Անգլիա յաղթական ելաւ: Այս տարի 9 երորդ անգամն է որ իրարու դէմ կը մրցէին ու 7 երորդ անգամը ըլլալով Անգլիա յաղթական կ'ելլէր:

\*. Գերմանական հինգ ֆութպօլի խումբեր մօտ ատենէն Զուիցբերիա պիտի մեկնին, հոն տեղի խումբերու հետ մրցելու համար: Այսպէս

կ'ուզեն նախնական քայլեր առնել իրենց Միջազգային մրցումներու մասնակցութիւնը ապահովելու յոյսով:

\*. Մօտերս Բարիզի մէջ ֆութպօլի միջազգային համաժողով մը տեղի պիտի ունենայ: Անգլիական, սկովտիական, իրլանտական և կալէստան ֆութպօլի միութիւնները ընտրեցին իրենց ներկայացուցիչները, որոնք պաշտօն ունին համաժողովին յայտնելու թէ՛ թշնամի տէրութիւններու մասնակցութեան պարագային, Անգլիացիները չպիտի ուզեն անդամակցիլ ո՛չ համաժողովին և ո՛չ ալ ֆութպօլի Միջազգային Միութեան:

\*. Լիվըրքուլի ֆութպօլի խումբը իր յաջողագոյն խաղացողներէն՝ Բէկնամը Նաւարանի խումբին ծախած է 1,500 անգլիական ոսկոյ փոխարէն: Դեռ վախ կայ որ ֆութպօլիստներու քսակարանը յիմարացուցիչ բարձրացումներ կրէ ու աղղէ... մեր պիւրի հրապարակին վրայ: Մեր ֆութպօլիստները սիրայօժար ուրիշ խումբերու պիտի միանային, եթէ անոնց տրամագրուին՝ առժամեայ կերպով... զոյգ մը անձակ կօշիկներ ու... կարճ... շապիկ մը, ցետտ ըլլալը կարեւորութիւն չունի!!

\*. Նորոյթ մը եւս: Իրլանտայի չնաշխարհիկ ֆութպօլիստները, չկարենալով իրենց ստացած օրավարձերովը ապրիլ և ապրեցնել... ուրիշները, «գործազուլ» ի սպառնալիք ըրած են, պահանջելով օրավարձքի բարձրացում!!! Արդէն Պրն. Վարագ նոյն պատճառներով չէ՞ր որ երկար ատենէ ի վեր «գործազուլ» էր հռչակած, ի զուր տեղը պահանջելով խաղացողներու... որակի բարձրացում!

\*. Անգլիոյ մէջ գտնուող 22 լաւագոյն խումբերը ֆութպօլի եղանակին, աշնան մէջ 152,367 քիլոմէթր տեղ կը ճամբորդեն: Իսկ սովորական խումբերը՝ 176,492 քիլոմ.: Նոյն եղանակին մէջ 4,000,000 ֆութպօլիստներ եւ կարգադիր Մասնախումբի անդամներ շոգեկառքով կը ճամբորդեն: Միլիոնաւոր հանդիսատեսներու, հետեւորդներու խօսքը չենք ըներ!

## ՀԵՇՅԵԼ ԱՆԱՒՈՐԴՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի մէջ. — Հաշտութեան տարեդարձի առթիւ, Սթրազգուրկ-Մէց-Բարիզ (495 քիլոմ.) հեռաւորութեան վրայ Նոյ. 11ին հեծելանիւրի միջազգային մրցում մը տեղի ունեցաւ:

Մրցման 35 հոգի մասնակցեցան: Ճորեկուան ժամը 2ին, Սթրազգուրկէն ճամբայ ե-



ան . սասկալի , սառեցուցիչ էր օդը , տեղ տեղ ձիւնապատ և ցեխոտ : Ակիզքները իսկ մրցումը կատարի յանգամանք մը ստացաւ , ու շատեր ուժաթափ ստիպուեցան մրցումէն դուրս ելլել . Մէթ ձ հասան 5 հոգի միայն : Սասկալի տեղա-տարափ մը սկսաւ . 2 Իտալացի մրցորդներ տեսնելով որ ոտքերէին և ձեռքերէին գրեթէ սառելու վտանգին ենթարկուած են , ընդհատեցին իրենց գնացքը : Ուրիշ Պէլճիքացի մը ուղեղային տազնապ ունեցաւ ու ստիպուեցաւ , պահ մը հանգչիչ : Մնացեալ երկուքը Թ , անսացիներ էին ու մինչև Բարիզ բնաւ իրարմէ չզատուեցան : Մըրցումը աւարտած նկատուելու համար հարկ էր փոքրիկ շրջան մը ընել ու ճիշդ այդ վերջի ճիգին մէջ՝ հակառակորդէն 2-3 մէթր անցնելով՝ Պ , Այափուա առաջնութիւն ստացաւ : Մըրցումը տեւեց՝ 25 ժամ , 21 վայրկեան , 7 երկվայրկեան : Պէլճիքացի մրցորդը՝ Լիւսիէն շարունակելով ճամբան՝ կէս ժամ վերջը հասաւ Բարիզ : Եթէ տկարութիւնը վրան եկած չլլար , հաւանաբար առաջնութիւնը այն առնէր , բայց պայման է որ պողպատը յաղթէ . . . երկաթին :

\* \* \* Յառաջիկայ գարնան , Անվէրսի միջազգային Ողիմպիական մրցումներու առթիւ նմանը շտեմուած հեծելաձիւի մեծ մրցում մը տեղի պիտի ունենայ — Միլան Լիօն Բարիզ — Անվէրս գծին վրայօք : Մասնաւոր կարգադրութեամբ մը , մրցումները պիտի վերջանան Ողիմպիական խաղերու Սթատիօնի մէջ , ճիշդ բացման օրը :

Վերջաբան . — Ֆրանսայի վերջի երեսփոխանական ընտրութիւններու առթիւ թերթերու և մարմնակրթական միութիւններու կողմէ «մարմնամարզիկ» կամ «համակիր» երեսփոխաններու ընտրութեան ի նպատակ մեծ բոքսական մղուեցաւ . ծանուցումներուն մէջ կ'ըսուէր թէ՛ եթէ Ֆրանսացի կուզեն փրկել իրենց հայրենիքը , աթլէթներու պէտք է տան իրենց գուէները : Այսպէս ընտրուած են 36 երեսփոխաններ՝ նախագահ ֆութպոլի կամ աթլէթիկ միութիւններու : Նայինք մենք քանի՞ հատ պիտի ունենանք հոս . . . ! : Ոչ մէկ հատ . . . հաւանաբար սովորութիւնը յարգած ըլլալու համար :

Վ. Ա. Հ. Բ. Ա. Մ. Ս. Փ. Ա. Փ. Ա. Զ. Բ. Ա. Ն.

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Մ Բ Յ Ո Ւ Մ Ն Ե Բ  
Ֆ Ո Ւ Թ - Պ Օ Ւ Ի Մ Բ Յ Ո Ւ Մ

Կիրակի 21 Դեկտ . Գատըզիւզի Իւնիօն քիւլպի մէջ տեղի ունեցաւ Հ . Մ . Ը Մ . Ի հայկական ֆութ-պոլի խումբին և Ֆէնէր-Պահչէ թուրք խումբին մէջ Լիկի կարեւոր մրցում մը : Երկու խումբերը 1 կօլով հաւասար մնացին : Այս մրցումը հայկ . խումբին պատուարեր է որովհետեւ Լիկի զօրաւոր խումբին հետ հաւասար եկան :

Մ Ա Ն Բ Ա Մ Ս Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ

Գ Ա Բ Բ Ա Ն Թ Ի Է Ի Ե Ի Պ Ե Թ Է Թ Ի Մ Բ Յ Ո Ւ Մ Ն Ե Բ Ո Ւ Ն

Դեկ . 4 թուականը Լօնտօնի համար սօն օր մըն էր . մրցումէն ժամեր առաջ փողոցները մրցումի գացողներով այնքան խճուղուած էր որ , ժամերով բոլոր հրապարակը գոց մնաց և հանրակառքերու երթուղարձը կասեցաւ : Հօլպօրն Ստատիօմին առջև բազմութիւնը աննկարագրելի էր . բազմաթիւ ոստիկաններ հազիւ կարող էին մէկ կողմէն եկողներուն ազատ անցք մը բանալ :

Մրցումը սկսաւ ժամը 10ին . ներկայ էր Գահամառանգը , որ բուն ծափահարութեամբ ընդունուեցաւ . կ'ըսուի թէ՛ մրցումէն առաջ առօրեայ փորձի միջոցին Գարբանթիէի ձեռքի ջիգերէն մին վնասուած ու սեւցած էր . իր տկարութիւնը հակառակորդին յայտնի չընելու համար ստիպուած էր ներկել այդ ջիգը ու ճիշդ այդ պատճառաւ է որ ջանացած էր իր հակառակորդը զգեանել կարելի եղածին չափ շուտ , իր տկար կողմին հարուած մը ուտելէ առաջ : Այսպէս կրցած է անշունչ զեաին տապալել իր հակառակորդը կզակին զօրաւոր հարուած մը տալով , ճիշդ 74 երկվայրկեանի մէջ :

Այս ուրախ լուրը երբ Բարիզ հասաւ քաղաքը դրօշազարդուեցաւ ու ամբողջ գիշերը խրախճանութիւններ տեղի ունեցան ու Գարբանթիէի կինացը մինչև առաւօտ «չամբանե»ի շիշեր պարպուեցան :

Գարբանթիէի արտասովոր ընդունելութիւն մը կը պատրաստուի Բարիզ վերադարձի օրը : Աշխարհիս լաւագոյն կովամարտիկը՝ Տէմսի , Գարբանթիէի տարած յաղթանակը լսելով ,



ըստ թէ ինք և իր բժիշկը մրցման արդիւնքի մասին որեւէ տարակոյս չունէին, ու իրենք տեսած էին կարեւոր պատրաստութիւնները մրցելու համար Գարբանթիէ հետ. եթէ այս վերջինը ընդունէր իրենց պայմանները:

**ՀԱՅ ԸՄՔԻՇԻ ՄԸ ՅԱՂԹԱՆԱԿԸ**

18 Նոյեմբ.ին Ա.Ներկայ՝ Ֆրէզնոյի մէջ, բմբշամարտիկ Արամ Յովսէփեան մրցած է Իտալացի բմբիշ Անճէլօ Թարամիշի հետ և յաղթած է ա՛ որ:

**ՄԵՐ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ**

Կը խնդրուի Հ. Մ. Ը. Մ. Ողիմպիական մրցումներու մէջ առաջնութիւն շահող մարզիկներէն, որ իրենց մաքուր նկարները դրկեն մեզ, Խնուղի առթիւ հրատարակելի բացառիկ թիւին համար:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Խմբագրութիւնս յանուն Հ. Մ. Ը. Մ. ի ցաւակցութիւն կը յայտնէ իր Պալթալիմանի Մասնաճիւղի անդամներէն Ասատուրեան եղբայրներու իրենց հօր մահուան առթիւ, նոյնպէս Սիւլատրի մասնաճիւղին Պ. Սեպուհի Գարագաշեանի իր եղբոր կսկծալի կորուստին համար:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԱՅԱՅԱՆՔ**

ԱՐԱԳԱՆԻ շաբաթաթերթի թիւ 45, 46, 47, 48 թիւերը 7,50 դր. բաժանորդագին տարեկան 300 դր. Հասցէ՝ Բերա Ալիսն փողոց թիւ 1-7. նմկտի. 95.

ՀԱՅ ԿԻՆ թիւ 4: Գին 12,50 դր. տարեկան 300 դր. Հասցէ փոստարկղ, թիւ 192, Բերա:

ՈՍՏԱՆ, թիւ 4: Գին 20 դր. Բաժանորդագին 500 դր. Հասցէ, Գալբրատան փողոց թիւ, 37 Կիլիկիա Գրատուն:

ՀԱՅ ԱՓԻՇԿ թիւ 9 10, Գին 70,50 դր. Բաժանորդագին 80 դր. Տարեկան հասցէ, Վլորա խան թիւ 17, նոր նա նկատան դէժ, Կ. Պոլիս:

ԻՐԱՆԻՆԻ թիւ 3, գին 10 դր. Տարեկան բաժանորդագին 120 դր. Հասցէ, Սթամպուլ, Զիշէք բազար, Աթըբարմաք խան, թիւ 10 11:

ԱՌԱՒՈՏ նորահասներու հանդէս. թիւ 1 և 2, Գին 100 ֆր. տարեկան բաժանորդագին 50 դր. Հասցէ, Պապը Ալի ճատտէսի թիւ 43: Բ. Դրան ճիշտ դիմացը:

ԿԱՎՈՇ Երզնթաթերթ շաբաթաթերթ, գին 5 դր. Տարեկան բաժանորդագին 250 դր. 50 ֆր.: Հասցէ Բերա Կալուօ 67 թիւ:

ԱՐՄԵՆԻԱ Շաբաթաթերթ Ազգային Քաղաքական. տարեկան բաժանորդագին 10 ֆր. Հայաստան, 20 ֆր. ուրիշ տեղեր, վեցամսեայ 5 ֆր. Հայաստան, 10 ֆր. ուրիշ տեղեր. Հասցէ Direction du journal "Arménia," Marseille (France).


ԱՅԳ Անկախ Շաբաթաթերթ հասցէ՝ Rédaction de journal arménien "Aig," 53, Boulevard Montparnasse (Paris).

ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ԶԱՅՆ Շաբաթաթերթ, բաժանորդագին 25 ֆր.: Հասցէ "Joghovourti Tzaïn," Rédaction et Administration: 96, Rue Monge Paris.

ՀՈՐԻՉՈՆ Օրաթերթ բաժանորդագին, տարեկան 500 դր.: Հասցէ՝ Imprimerie Kéchichion, Smyrne.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ, Օրաթերթ, տարեկան բաժանորդագին 500 դր.: Հասցէ՝ Արեւելեան Մամուլի վարչութեան, Իզմիր:

ՀԱՅ ԶԱՅՆ, օրաթերթ, բաժանորդագրութիւն, տարեկան 300 դր.: Հասցէ՝ "Haï Tzaïn," journal arménien B. P. N. 62, Adana (Cilicie).



ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԱՇԽԱՐՀ-ը անունն է գրքի մը որ կոչուած է անմահացնելու որքան Հայ ժողովուրդի՝ նոյնքան ալ անոր անխոնջ մէկ գաւկին. Զիթունիի անունը:

Ասացանք կազմուած երկու շքեղ հասորները, որք 384 հոծ էջերու մէջ կը բովանդակեն Հայաստանի ինքնատիպ երկհարիւրեակ մը խաղերն ու գրօսները՝ մինխաթիւռային նկարագրութիւնով մը, բաժնուած երկք մասի. — Մանկական, Պատանեկան ու Երիտասարդական Խաղեր, վերջին բաժինը կը պարունակէ ժամանցները (Շուտասելուկ, Հանելուկ և Հէք-իտի): Գործին բանասիրական ազգագրական ու մանկավարժական նշանակութիւնը խիստ մեծ է վերածնող Հայաստանի համար: Գպրոցներու սկառսներու և առհասարակ զրօսասէրներու համար միակ գիրքն է Զիթունիի «Ռազախար»-ը որ արժանապէս գնահատուած ու պատկուած է Իզմիրեանց զրական մրցանակով:

Փափաքողները կրնան ստանալ նաև Հայ Սկառսի խմբագրատունէն, զրկելով երկու հասորի՝ գինը 120 դր.: Մօտ ատենէն պիտի բարձրանայ երկու օսկիի:

